



## **ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԶԱՎԹԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԱՍ II**

*ՄԱՍ I <https://www.pahak.org/publications/OCCUP-1>*

### **ԶԻՆՎԱԾ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Կազմեց պահեստի փոխգնդապետ Ա.Ամիրզադյանը, ՊաՀԱԿ**

Առաջադրանքը կատարելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ դրույթները.

- գործեք զգույշ և խորամանկ,
- մարտի մի բռնվեք հակառակորդի գերակշռող ուժերի հետ,
- մի վտանգեք անձնակազմին և հոգատար եղեք նրա նկատմամբ,
- գործեք դարաններից, փորձեք անակնկալի բերել հակառակորդին,
- զաղտնի պահեք գործողությունների պլանը,
- մի շտապեք որոշումներ կայացնել, գործեք հաստատապես,
- երբեք մի թերագնահատեք հակառակորդին, հաշվարկեք ձեր ուժերն ու հնարավորությունները,
- հակառակորդի հետապնդման դեպքում կովի մի բռնվեք նրա հետ, փորձեք ավելի արագ կտրվել նրանից,
- շրջապատման դեպքում մի փորձեք անմիջապես ճեղքել, տարաշարժվեք, փորձեք շատ կորուստներ պատճառել հակառակորդին,
- շրջապատումը ճեղքելուց հետո արագ հեռացեք, փորձեք մարտի չբռնվել հետապնդող հակառակորդի հետ,
- ավարտելով խոշոր օպերացիան՝ փոխեք տեղակայման շրջանը,
- զբաղեցնելով նոր շրջան, տարակենտրոնացրեք ձեր ուժերն ու միջոցները:


## Ռազմերթ

Զինված կազմավորումների (ջոկատների) մարտավարությունը պահանջում է բազմաթիվ երթեր կատարելու անհրաժեշտությունը: Մարտական գործողություններից առաջ և դրանց միջև ընկած ժամանակահատվածում պետք է խուսափել անհարկի տեղաշարժերից՝ անձնակազմի ուժերը խնայելու և հակաբազմորդի հանկարծակի հարձակման դեպքում հարկադիր նահանջի համար:

Երթի որոշում կայացնելիս անձնակազմին չպետք է հասցվեն դրա պատրաստման և անցկացման մանրամասն հրահանգները: Անհրաժեշտության դեպքում նախապատրաստական աշխատանքները (պաշարների տեղափոխում, տեղանքի տեղազննություն) պետք է քողարկված լինեն այլ միջոցառումներով և կեղծ լուրերի տարածմամբ:

Ռազմերթ իրականացնելիս անհրաժեշտ է խուսափել հիմնական ճանապարհներով և խոշոր բնակավայրերով տեղաշարժը՝ պահպանելով հետևյալ կանոնները.

- անձանոթ տեղանքով շարժվելիս օգտվեք բանիմաց և փորձառու ուղեկցորդի ծառայությունից,
- կողմնակի անձանցից ոչ ոք չպետք է իմանա որտեղից է սկսվելու և որտեղ է ավարտվելու ռազմերթը,
- անհրաժեշտ է գաղտնի պահել ջոկատի (ստորաբաժանման) քանակը,
- հնարավորության դեպքում ռազմերթն իրագործեք գիշերը,
- ռազմերթի ժամանակ շարժվեք ջոկատի (ստորաբաժանման) կազմում,
- կազմելով 3-4 հոգուց բաղկացած խմբեր, որոնք պետք է գործեն մինչև մի քանի հարյուր մետր հեռավորությամբ՝ ապահովեք երթային պահպանությունը շարասյան գլխամասում և ետնամասում (գծապանկար 11),
- անձնակազմին տեղեկացրեք հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում գործողությունների կարգի մասին:



Գծանկար 11. Երթային պահպանություն

## Ազդանշանում

Տարբեր հանգամանքների բերումով ջոկատները ստիպված կլինեն բազմիցս մտնել բնակավայրեր: Նրանց համար ամենամեծ վտանգը թշնամու դարանակալներն են:

Բնակավայրում հակառակորդի առկայության մասին բնակչությունը կարող է նախազգուշացնել հետևյալ պարզ ձևերով.

- ծխային կամ լուսային ազդանշաններով,
- պատուհանների փեղկերը, դռները բացել-փակելով կամ տարբեր սպիտակեղեն կախելով,

- իրերը, առարկաները ցուցադրելով կամ մաքրելով,
- պատուհանները լուսավորելով կամ մթնեցնելով:


### Դիվերսիաներ ճանապարհներին

Ճանապարհներին կարող են իրականացվել հետևյալ դիվերսիաները.

- հանել կամ վերադասավորել ճանապարհային ցուցանակները,
- տեղադրել ցանկացած ձևի (ատամնավոր, կոնաձև և այլն) բուխակներ (шипы),
- ձգել տարատեսակ ճուպաններ,
- ականներ տեղադրել, և այլն:

Ճանապարհներին իրականացվող դիվերսիաները պետք է համաձայնեցվեն ռազմաճակատում կանոնավոր բանակի գործողությունների հետ: Դիվերսիաները հատկապես արդյունավետ են այն դեպքերում, երբ հակառակորդը ստիպված է վերախմբավորվել կամ իր գործերը (ուժերը) դուրս բերել խորքից:

Ճանապարհներին չպայթեցվող արգելապատնեշներ տեղադրելու համար անհրաժեշտ է օգտագործել սղոցված ծառեր: Այս դեպքում, խորհուրդ է տրվում չօգտագործել հաստաբուն ծառերը, որպեսզի հակառակորդը ստիպված լինի ավելի շատ ժամանակ և ջանք ծախսել երթուղին մաքրելու համար: Փլատակներում կարող են տեղադրվել ական-ծուղակներ, իսկ վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է կիսաքողարկված մետաղալարերի կտորներով նմանակել դրանք (գծանկար 12):




Գծանկար 12. Ճանապարհային արգելապատնեշների սարքավորում

Պայթեցվող արգելափակոցներ տեղադրելիս կարող էք օգտագործել ձգման գործողությամբ հակահետևակային ականներ (կենդանի ուժի ոչնչացման շառավիղը մինչև 30 մ) և հակատանկային ականներ (գրահատանկային տեխնիկան շարքից հանելու համար):


Առանձին ատոմեքենաների վրա հարձակումը կազմակերպվում է ճանապարհին ամենապարզ արգելափակոցների տեղադրումով (գծանկար 13): Մեքենայի վարորդն ու ավազը ոչնչացվում են հրաձգային զենքերի կրակով: Հնարավորության դեպքում մեքենան հարձակման վայրից տեղափոխվում է ապահով միջավայր, որտեղ գրավված ռազմավարը բեռնվում է ջոկատի տրանսպորտային միջոցներում: Եթե այդ մեքենան դեռևս պիտանի է օգտագործման համար, քարշակվում է ջոկատի ՄՏՎ, իսկ եթե ոչ՝ ոչնչացվում է տեղում:

Հակառակորդի մեքենայի վրա հարձակման դեպքում կարող է սահմանվել գործողությունների հետևյալ կարգը (գծանկար 14).

- դիտորդը զեկուցում է մեքենայի մոտենալու մասին,
- արգելափակող խումբը օգտագործելով արգելափակիչ միջոցները կանգնեցնում է ավտոմեքենան,
- դիպուկահարները կրակով ոչնչացնում են վարորդին և մեքենայի ավագին,
- մեքենան ճանապարհից դուրս է բերվում սպառնով միջավայր,
- ռազմավարը տեղափոխվում է նախօրոք ժամանած մեքենաներ:



Գծանկար 13. Օդաճնշական անվադողերի վնասման մետաղական բուխակներ



Գծանկար 14. Հարձակում միայնակ ավտոմեքենայի վրա

1-մարտական պահպանություն, 2-արգելափակող խումբ, 3-դիպուկահար, 4-մեքենայի անձնակազմը ոչնչացնող խումբ, 5-ջոկատի հրամանատար, 6-ռազմավարը տեղափոխող խումբ:

### Կրակային հարձակում

Կրակային հարձակումը նպատակահարմար է իրականացնել բարենպաստ պայմաններում, երբ հակառակորդը հանգստանում է կամ իրականացնում է երթ:

Հատկապես արդյունավետ է հանկարծակի կրակային հարձակումը, որի իրականացման համար անհրաժեշտ է օգտագործել առկա բոլոր կրակային միջոցները :

Հանկարծակի կրակային հարձակում կազմակերպելիս, հատկապես հակառակորդի շարժվող շարասյուների դեմ, կրակի բարձր խտություն ստեղծելու նպատակով, կրակային միջոցները պետք է տեղակայվեն մեկը մյուսից նվազագույն հեռավորության վրա: Կրակային միջոցների բարձր կոնցենտրացիան, կրակային հարձակման անցողիկ լինելու պատճառով, վտանգ չի ներկայացնում հակառակորդի պատասխան հարվածի դեպքում (գծանկար 15):



Գծանկար 15. Փոքր թիրախների վրա հարձակման կարգը

Հանկարծակի կրակային հարձակման կարգը կարող է լինել հետևյալը.

- հրամանատարի հրամանով անձնակազմը դիրք է զբաղեցնում և պատրաստվում է կրակ վարելուն,
- հրամանով կամ նախապես պայմանավորված գործողությունների կարգով հակառակորդի ուղղությամբ ուժեղ կրակ է բացվում,
- ձեռքի գնդացիներից, ինքնաձիգներից կրակը իրականացվում է, որպես կանոն, երկար կրակահերթերով,
- 400 մ-ից պակաս հեռավորության վրա կրակելիս կիրառվում են ինքնաձիգների ենթափողային կամ հրացանային նոնականետերը:

Շարասյուների և երկաթուղային շարժակազմերի վրա կրակային հարձակումը նպատակահարմար է իրականացնել բարձր լեռնային տեղանքում՝ կիրառելով ինքնաձիգեր, ձեռքի գնդացիներ և սկանանետեր:


Կրակային հարձակում կազմակերպելիս հրամանատարը պետք է որոշի.

- կրակի բացման կարգը և ժամանակը (հրամանով կամ ինքնուրույն),

- շարասյունը կանգնեցնելու եղանակը (փլվածքներ ստեղծելով, ականներ տեղադրելով, հրաձգային զենքերից կրակելով),
- կրակային խնդիրները (գնդացիները և առանց ետզուրք թնդանոթները կրակը միշտ վարում են շարասյան կենտրոնի ուղղությամբ, իսկ ականանետները՝ կանգ առած շարասյան երկայնքով),
- կրակի դադարեցման ազդանշանը (չչակի ձայն, ազդանշանային հրթիռ) կամ նախապես պայմանավորված ժամանակը:

Շարասյան վրա հարձակվելիս (գծանկար 16) պետք է հաշվի առնել հետևյալը.

- զինված ջոկատների զբաղեցրած շրջաններում հակառակորդը բոլոր շարասյունների երթը իրականացնելու է մարտական պահպանությամբ,
- 20 բեռնատար մեքենաներից կազմված շարասյան համար, որպես կանոն, առանձնացվելու են ուղեկցող երկու մարտական մեքենաներ,
- մոտ 40 բեռնատար մեքենաներից բաղկացած շարասյունը կարող են ուղեկցել ԶՓՄ-ները հետևակի դասակով, որոնք հնարավոր է ուժեղացվեն երկու տանկով:




Գծանկար 16. Կրակային հարձակում հակառակորդի շարասյան վրա

Շարասյան երթը կարելի է շարակարգել հետևյալ կերպ.


- գլխամասում, 200-300 մ հեռավորության վրա՝ պահպանություն (տանկ և մեկ կամ երկու ԶՓՄ),
- մեջտեղում՝ բեռնատարներ,
- ետնամասում՝ պահպանություն (տանկ և մեկ կամ երկու ԶՓՄ):
- Շարասյան ոչնչացման գործողությունների կարգը կարող է լինել հետևյալը.
- գնդացիներից, ինքնաձիգներից գնդակոծվում են բոլոր մեքենաները,
- հակառակորդի դիմադրությունը ճնշելուց հետո վճռական գրոհով գրավվում են մեքենաները,
- հակառակորդի ուժեղ կրակային հակազդեցության դեպքում հրամանատարի հրամանով մարտը դադարեցվում է, և անձնակազմը նահանջում է հավաքակայան:

Հակառակորդի շարասյան և երթային պահպանության վրա հարձակման տարբերակները դիտարկենք գծանկարներ 17-ում և 18-ում:

Գծանկար 17. Հակառակորդի շարասյան վրա հարձակման տարբերակ



Գծանկար 18. Երթային պահպանության վրա հարձակման տարբերակ



### Հանկարծակի հարձակում

Հանկարծակի հարձակումը նպատակահարմար է իրականացնել հակառակորդի պահեստների, գորանոցների, օդանավակայանների և այլ, որպես կանոն, պահպանվող օբյեկտների վրա:

Հարձակումից առաջ հրամանատարը պարտավոր է անձամբ կատարել տեղագնություն: Տեղագնության ընթացքում նա պետք է.

- որոշի օբյեկտների քանակը, պահպանության առանձնահատկություններն ու կրման կարգը,
- նախանշի դրանց վրա հարձակման նպատակներն ու կարգը,
- օբյեկտը շարքից հանելու համար որոշի նյութերի (պայթուցիկ, հրկիզող) սպառման քանակը,
- ուրվագծի և որոշի օբյեկտին մոտենալու ուղիները, դարանակալման վայրերը, կրակային միջոցների դիրքերը, նահանջի ճանապահը և հավաքակայանի տեղը,
- հնարավորինս խնդրավորի խմբերի հրամանատարներին տեղանքում:
- Հարձակումը կազմակերպելիս պետք է հաշվի առնել հետևյալը.
- խնդիրը պետք է կատարվի յուրային ուժերով,
- ստորաբաժանումը պետք է մանրակրկիտ պատրաստվի՝ հաշվի առնելով առաջիկա գործողությունների առանձնահատկությունները,
- խնդիրը կատարելու համար ստորաբաժանման կազմում ստեղծվում է չորս խումբ (պաշտպանական, մարտական, տրանսպորտային, տեխնիկական),
- օբյեկտի վրա հարձակումն իրականացվում է գիշերը կամ սահմանափակ տեսանելիության պայմաններում,
- ճշգրիտ որոշվում է օբյեկտի պայթեցման և պայթյունների հաջորդականության ժամանակը,
- հարձակումը իրականացվում է հանկարծակի:
- Հարձակման պլանը մշակելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահանջների կատարումը.
- գաղտնի պահել առաջիկա գործողությունների պլանը,
- հնարավորինս սահմանափակել գործողության մշակմանը ներգրավվող անձանց շրջանակը,



- գործողության տարածք երթ կատարելիս խուսափել հիմնական ճանապարհներով շարժվելուց,
- ապահովել անձնակազմի քողարկումը գործողության տարածքում,
- հարձակումն իրականացնել գիշերը,
- առաջին հերթին ոչնչացնել օբյեկտի պահպանությունն իրականացնող պահակախումբը:


Առաջադրանքը կատարելիս խմբերի գործողությունների կարգը կարող է լինել հետևյալը (գծանկար 19):

*Պաշտպանական խումբը* (անձնակազմը զինված է ինքնաձիգներով, գնդացիներով, ՁՀՏՆ-ով, ձեռքի նռնակներով) ապահովում է մարտական, տրանսպորտային և տեխնիկական խմբերի գործողությունները, ոչնչացնում հակառակորդի արտաքին պաշտպանությունը, պաշտպանում է յուրային ստորաբաժանումների նահանջը: Խումբը կրակային դիրքեր է զբաղեցնում, որպես կանոն, ճանփաբաժաններում և կամուրջների մոտ:

*Մարտական խումբը* (անձնակազմը զինված է ինքնաձիգներով, ատրճանակներով, նռնակներով և սառը զենքերով) ոչնչացնում է պահակախումբը, խափանում է կապը, գրավում է օբյեկտը և վերահսկում այն: Առաջադրանքը կատարելուց հետո խումբը դառնում է ստորաբաժանման հրամանատարի պահեստագոր:

*Տրանսպորտային խումբը* (անձնակազմը զինված է ինքնաձիգներով, պատգարակներով, ուսապարկերով, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցներով) հավաքում է զենքը, զինամթերքը, սնունդը, վառելիքը և մինչև մարտի ավարտը դուրս է գալիս նախանշված հավաքակայան:


*Տեխնիկական խումբը* (անձնակազմը զինված է ինքնաձիգներով, պայթուցիկ նյութերով, հրկիզող միջոցներով) մնացած խմբերի հեռանալուց հետո շարքից հանում է գրավված օբյեկտը:



Գծանկար 19. Հարձակում պահեստի վրա

Պահեստների վրա հարձակվելիս անհրաժեշտ է բռնագրաված գույքը տեղափոխել և պահեստները ոչնչացնել:

Պահեստները ոչնչացնելու ամենադյուրին ճանապարհը հրկիզումն է: Պահեստը հրկիզելու համար օգտագործվում են բենզին, կերոսին, յուղ կամ հրկիզող խառնուրդ: Պահեստում անհրաժեշտ է շարքից հանել բոլոր հակահրդեհային միջոցները, իսկ հրդեհի արագ տարածման համար բացել դռները, կտրել պատուհանները: Հողմաշունչ կողմում գույքը պետք է թրջվի բենզինով, կերոսինով կամ այլ այրվող նյութով: Արկղերը, պարկերը, հակերը պետք է հրկիզվեն միանգամից մի քանի տեղում: Հրկիզման կարգը տես գծապատկերում.



Պահեստի հրկիզման ընթացքում անվտանգությունն ապահովելու համար պետք է գործել հետևյալ կերպ.

- նիտրոլաքը նեղ գծով լցնել գետնին (ուղեգծի այրման արագությունը մոտ 50 սմ/վ է),
- բենզինը (կերոսինը) լցնել պահեստի գույքի վրա,
- այրել նիտրոլաքի ուղեգիծը և արագ պատասպարվել:

Պետք է հիշել, որ հրկիզման ժամանակ վառելիքով տակառները կարող են պայթել: Այրվող տակառների այս հատկությունը կարող է օգտագործվել հակառակորդի կողմից հրդեհի մարումը խափանելու համար:

*Հարձակում բենզինի (վառելիքի) պահեստի վրա:*

Բենզինի (վառելիքի) պահեստի վրա հարձակում կազմակերպելիս պետք է հաշվի առնել հետևյալը.

- որպես կանոն, բենզինի պահեստներին մոտենալու համար լավ ճանապարհներ են կառուցում,
- վերգետնյա կառուցված վառելիքի օբյեկտների պահեստավորված տարողությունը (մինչև մի քանի միլիոն լիտր) գտնվում է բաց վիճակում,
- ստորգետնյա կառուցված վառելիքի պահեստներ կարելի է մուտք գործել միայն հատուկ մտոցների կամ հորանների միջոցով,
- բենզալցակայանները, երկաթուղային ցիստեռններն ունեն վառելիքի դատարկման սարքեր, որոնք կարող են օգտագործվել պահեստում (պահոցում) հրդեհ առաջացնելու համար:

Բենզինը դյուրավառ է: Դիզելային վառելիքը, ընդհակառակը, դժվար է հրկիզել: Ռեզերվուարի վառելիքը դանդաղ է այրվում, և հաճախ ընդհանրապես չի բռնկվում:


Բացօդյա դասավորված վառելիքի տակառները կարող են ոչնչացվել հետևյալ կերպ.

- տակառների վրա բենզին կամ կերոսին լցնել և հրկիզել,
- պայթեցնել;
- տակառներում անցքեր բացել և վառել արտահոսող վառելիքը (գծանկար 20):

Վառելիքի և քսանյութերի վերգետնյա պահեստները կարող են ոչնչացվել հետևյալ եղանակներով.

- ռեզերվուարը գնդակոծել ենթափողային նոնակներով,

- պայթեցնել (առնվազն 4 կգ լիցքով),
- տարաների մեջ անցքեր բացել և վառել արտահոսող վառելիքը:



**Գծանկար 20. Վառելիքով լի տակառների դարսակը ոչնչացնելու մեթոդներ**

Ստորգետնյա պահեստը կարող է ոչնչացվել հետևյալ եղանակներով.

- պայթուցիկներն իջեցնել ռեզերվուար մտոցի կամ հորանի միջով (առնվազն 0,5 կգ լիցք),
- պայթեցնել լիցքը,
- հրկիզել պահեստը, եթե այն չի բռնկվել լիցքի պայթյունից հետո:


Երկաթուղային ցիստեռները խորհուրդ է տրվում ոչնչացնել կումուլյատիվ նոնակներով կամ պայթեցմամբ (առնվազն 500 գ լիցք): Պայթեցման լիցքը պետք է ամրացնել ցիստեռնի ներքևի կամ կողային մասին:

*Հարձակում զինամթերքի պահեստի վրա:*

Ջոկատները, որպես կանոն, միշտ զինամթերքի պակաս ունեն: Հետևաբար, հակատակորդի վրա հարձակվելիս առաջին հերթին անհրաժեշտ է վերցնել նրա զինամթերքը, միայն բացառիկ դեպքերում դրանք պետք է ոչնչացվեն:


Հրաձգային և ծանր զինատեսակների զինամթերքը կարող է ոչնչացնել հրկիզման, պայթեցման կամ ջրածածկման միջոցով:

Հրաձգային զենքի փամփուշտները կարող են թրջվել բենզինով և հրկիզվել: Ժամանակի սղության դեպքում դրանք կարող են ոչնչացվել փաթեթավորված վիճակում կամ արկերների մեջ (գծանկար 21):



**Գծանկար 21. Զինամթերքի ոչնչացման մեթոդներ**

Տարբեր տրամաչափի արկերը խորհուրդ է տրվում ոչնչացնել պայթեցման միջոցով: Որպես ճայթիչներ կարող են օգտագործվել հակատանկային (հակահետևակային) սկանները, տրոտիլային պայթյազլանիկները: Փաթեթավորված արկերը (առանձին արկերը) շարվում են դարսակներով և պայթեցվում (գծանկար 22):




Գծանկար 22. Ոչնչացման համար զինամթերքի դասավորման կարգը

1 - հակատանկային ականներից պատրաստված պայթուցիկ լիցք (առնվազն 10 կգ), 2 - ականներով, պայթուցիկ նյութերով կամ ձեռքի նոնակներով արկղեր, 3 - հրետանային արկղերով կամ ականանետային ականներով արկղեր, 4-ռեակտիվ զինամթերք և հրատեխնիկական միջոցներ, 5-30 մմ զենիթային արկղեր (հրաձգային զենքերի զինամթերք):

*Հարձակում շտաբի կամ գորանոցի վրա (գծանկար 23)*

Շտաբի կամ գորանոցի վրա հարձակվելիս անհրաժեշտ է ամբողջությամբ արգելափակել տարածքը և թույլ չտալ, որպեսզի թշնամին խուսափի հարվածից կամ մոտեցնի իր պահեստային ուժերը: Հարձակումը իրականացնել արագ: Հակառակորդի անձնակազմը ոչնչացնել տեղակայման վայրում:



Գծանկար 23. Շտաբի կամ գորանոցի վրա հարձակման տարբերակ

*Հարձակում առանձին հենակետի վրա*

Ստորաբաժանումում հենակետի վրա հարձակվելու համար ստեղծվում են խմբեր մարտական (կրակային աջակցության, գրոհային, արգելավերացման, ականագերծման), ոչնչացման, ռազմավարի (տրանսպորտային):

Հարձակման սկսվելուն պես շարքից հանվում են հակառակորդի բոլոր միջոցները: Միաժամանակ ոչնչացվում են սպաների տեղավորման համար նախատեսված տարածքը, ականանետերը, գնդացիները, լուսարձակող կայանքները:


Կախված իրավիճակից, դիմադրության շարժման մարտիկները կարող են նախապես ներդրվել հակառակորդի շարքերում՝ խոհարարների, հավաքարարների և այլ աշխատողների անվան տակ: Նրանք, հարվածելով հակառակորդին, կարող են հսկայական աջակցություն ցուցաբերել զինված ջոկատին՝ հենակետը գրավելու գործում:

*Էլեկտրամատակարարման ցանցի վնասում*

Էլեկտրամատակարարման ցանցերում չափազանց խոցելի են համարվում տրանսֆորմատորային կայանները, որոնց վնասման դեպքում կարող է ընդհատվել հսկայական տարածքի էլեկտրամատակարարումը:

Տրանսֆորմատորային կայանը, որպես կանոն, գտնվում է առանձին շենքում, որը ներառում է տրանսֆորմատորներ, հովացման սարքեր, անջատիչներ և մեկուսիչներ: Կայանի տարածքում կարող է տեղադրված լինել լուսարձակող կայանքներ: Որպես կանոն, կայանից ոչ հեռու (100 մ-ից ոչ ավելի) տեղադրված է բարձրավոլտ կայմը:

*Շրջանի էլեկտրամատակարարման խախտանույնը (գծանկար 24)*



**Գծանկար 24. Շրջանի էլեկտրամատակարարումը և դիվերսիաների հնարավոր վայրերը:**


1-վարչական և արդյունաբերական կենտրոն, 2-էլեկտրահաղորդման գծեր, 3-օղակաձև էլեկտրահաղորդման գիծ, 4-էլեկտրաէներգիայի սպառողներ (ձեռնարկություններ, գործարաններ, բնակելի շենքեր և այլն), 5-տեղական ենթակայան (մեկ տրանսֆորմատորային կայանի համար մոտ հինգ տեղական ենթակայան), 6-տրանսֆորմատորային կայան (մեծ քաղաքի համար մոտավորապես հինգից վեց տրանսֆորմատորային կայաններ՝ օղային էլեկտրահաղորդման գծերով):

Տրանսֆորմատորային կայանի շարքից հանելու կարգը հետևյալն է (գծանկար 25).

- 10 մմ մետաղյա թաղանթով պաշտպանված տրանսֆորմատորների պայթեցում (առնվազն 3 կգ լիցքով),
- տրանսֆորմատորների հովացման սարքերի ոչնչացում (մոտ 2 կգ լիցքով կամ կուուլյատիվ նռնակի արձակումով),
- մեկուսիչների խափանում (հրաձգայի գեների կրակահերթով կամ պայթեցմամբ՝ 200 գ լիցքով),

- սարքավորումների ոչնչացում (նոնակով կամ 5 կգ լիցքով),
- կայանի տարածքի հրկիզում:

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը շարքից դուրս են հանվում կայանի պայթեցմամբ, որպես կանոն, անհարմար, դժվարամատչելի վայրերում (գառիվեր լանջերին, գետերի ափերին, կիրճերում) կամ կարճ միացում առաջացնելով:



**Գծանկար 25. Տրանսֆորմատորային կայանում օբյեկտների տեղադրվածությունը:**


1-հեռախոսագծեր, 2-հերթապահի տուն, 3-պահպանություն, 4-լուսարձակող կայանք, 5-տրանսֆորմատոր, 6-հովացման սարք, 7-մեկուսիչ:

Կայմի պայթեցման համար, պայթուցիկները ամրացվում են հենասյուններին տարբեր բարձություններում: Խորհուրդ է տրվում լիցքերը պայթեցնել միաժամանակ: Կարճ միացում առաջացնելու համար պետք կրող էլեկտրալարերը ձաղկել ճոպանով (մետաղալարով), այսինքն, ճոպանի մի ծայրը պետք է ամրացնել որևէ մետաղական առարկային կամ ամրացնել գետնին խրված ցցաձողին, իսկ մյուս ծայրին կցելով բեռ՝ նետել էլեկտրալարերի վրա: Կարճ միացման պահին առաջանում է ուժեղ էլեկտրական դաշտ: Ուստի դիվերսիայի վայրից փախչելը վտանգավոր է, պետք է շարժվել դանդաղ, կարճ քայլով:


### **Հարձակում երկաթուղիների վրա**

Երկաթուղին շարքից հանելու նպատակով կարող են ոչնչացվել կոնտակտային էլեկտրոցանցը, երկաթուղային գծերը, շարժակազմը, երկաթուղային կայարանները:

Կոնտակտային ցանցը կարող է շարքից հանվել հրաձգային զենքերից՝ մեկուսիչները ոչնչացնելով (գծանկար 26): Մեկուսիչների վրա կրակելիս անվտանգ հեռավորությունը պետք է լինի առնվազն 50-80 մ: Բացի այդ, կոնտակտային ցանցի աշխատանքը կարող է խափանվել կարճ միացում առաջացնելով (գծանկար 27): Դրա համար ամենահարմար տեղը կարող է ծառայել տարատեսակ անցուղիները: Կարճ միացման համար անհրաժեշտ է օգտագործել 5-8 մմ հաստությամբ ճոպան, որի մի ծայրը ամրացնել որևէ մետաղական առարկային (բազրիք, ցանկապատ), իսկ մյուս ծայրին կցելով բեռը նետել էլեկտրալարերի վրա՝ առաջացնելով ցանցի միակցում: Նմանատիպ եղանակով ցանցի միակցումը կարող է կազմակերպվել երկաթուղու ցանկացած հատվածում:



Գծանկար 26. Երկաթգծի կոնտակտային ցանց



Գծանկար 27. Կոնտակտային ցանցի կարճ միացման կառուցվածքը:

1-կոնտակտային լար, 2-նետվող ճուղյան, 3-ճանապարհի եզրագծի ցանկապատին միացված մալուխ:

Երկաթուղային ցանցը կարող է շարքից հանվել ապամոնտաժման և ռելսերի պայթեցման միջոցով:

Պաստառը ապամոնտաժելիս կետաբևեռները, որոնցով ամրացված են ռելսերը, տեղահան են արվում, և քանդվում է ճանապարհի մի հատվածը:

Պայթեցումը կարող է իրականացվել երկաթուղային կազմը կործանելու նպատակով: Խորհուրդ է տրվում պայթեցնել ներքին ռելսը, որպեսզի վագոնների արտանկումը տեղի ունենա հարևան ռելսամեջուս: Պայթեցման ամենահարմար վայրերն են ոլորանները, թունելների մուտքերը, թեքությունները և ճանապարհի այլ




նեղ հատվածները: Շրջադարձում գնացքի վթարը կազմակերպելու համար բավական է ռելսի 30 սմ հատվածում խզվածքի առաջացումը, իսկ ճանապարհի ուղիղ հատվածում՝ 50-60 սմ:

Ռելսերը պայթեցնելու համար օգտագործվում են պայթեցման գլանիկներ 0,5-1 կգ քաշով, ինչպես նաև սկաններ և նոնակներ (գծանկար 28): Ռելսերը պայթեցնելու ամենահարմար վայրերն են սլաքները (գծանկար 29), խաչարդները, ուղեփոխիչները (գծանկար 30), որոնք կարող են շարքից հանվել մինչև 1 կգ քաշ ունեցող լիցքով:

**Ավազե պարկեր**




Ա




Բ

**Գծանկար 28. Ռելսերի պայթեցում**

Ա-տրոտիլային գլանիկի և հրահաղորդող քուղի օգնությամբ, Բ-տրոտիլային գլանիկի և նոնակի օգնությամբ:




**Գծանկար 29. Երկաթգծի ուղեփոխիչներ**



**Գծանկար 30. Երկաթգծի խաչարդ**

Շարժակազմը կարող է շարքից հանվել հետևյալ կերպ.

- էլեկտրաքարշերի դեպքում ոչնչացնել մեկուսիչները հրաձգային զենքերի կրակով, տրանսֆորմատորները ծակել և հրկիզել, շարքից հանել սարքերը,
- երկաթուղային վագոնների դեպքում պայթեցնել սոնին 1 կգ լիցքով, ավագ լցնել անիվի ռեդուկտորի մեջ (գծանկար 31):



**Անիվի  
ռեդուկտոր**

**Գծանկար 31. Անիվի ռեդուկտորի տեղը**

*Հարձակում երկաթուղային կայարանի վրա*


Երկաթուղային կայարանը բաղկացած է կայանի շենքից, ճանապարհային պարկից (սլաքներ, խաչարդներ, պտտվող շրջան), յուղե մեկուսիչներով կոնտակտային էլեկտրոցանցի հենասյուներից, հեռախոսային և հեռագրական կապի գծերից (գծանկար 32):

Կայանի վրա հարձակման ընթացքում անհրաժեշտ է պայթեցնել սլաքները (խաչարդները), ոչնչացնել էլեկտրոցանցի հենասյուները, կտրել կապի ու ազդանշանային համակարգի գծերը, առգրավել երկաթուղայինների համազգեստը, պահեստներում պահվող զենքը, զինամթերքը և սննդի պաշարները:

Երկաթուղային կայարաններում ջոկատների գործողությունների մարտավարության առանձնահատկությունը՝ փոքր դիվերսիաների միջոցով գնացքների կանոնավոր երթևեկության խափանումն է: Գնացքների երթևեկության

Ժամանակացույցի ամենօրյա խախտումն ավելի արդյունավետ է, քան մեկ ամսվա ընթացքում մեկ վթարի կազմակերպումը:

Ռելսերի պայթեցումը կարող է կանգնեցնել երկաթուղու երթևեկությունը 6-8 ժամով, իսկ գնացքի վթարը՝ 12-13 ժամով:



Գծանկար 32. Երկաթուղային կայարանի կառուցվածք

1-կայանի շենք, 2 - հեռախոսային գիծ, 3-դիսպետչերական սենյակ, 4-փոխանցման սլաքներ, 5-յուղե մեկուսիչով կոնտակտային ցանցի հիմնական հենասյուն, 6-լուսազդանշան:

Երկաթուղում ջոկատների գործողությունների արդյունավետությունը նվազեցնելու համար հակառակորդը կարող է պատասխան միջոցներ ձեռնարկել, որոնք ամեն դեպքում բացասաբար կանդրադառնան երկաթուղային տրանսպորտով գորքեր և բեռներ տեղափոխելու հնարավորությունների վրա: Այն կարող է նվազեցնել գնացքների արագությունը, ձևավորել խառը գնացքներ (ուղևորատար և բեռնատար վագոններից բաղկացած), թույլ տալ, որպեսզի ավագով հարթակները շարժվեն շարժակազմերի առջևից կամ երկաթուղու պահպանությունը ուժեղացնելու համար յուրաքանչյուր 100 մ մեկ պահակ կարգել:


Գնացքակազմի վրա հարձակման համար նշանակվում են. հարձակման շրջանը, հանդիպման և կապի կետերը, պահեստային շրջանը, երկաթուղային գծի պայթեցման հիմնական և պահեստային վայրը (գծանկար 33):

Հարձակման շրջանը կարող է ներառել պայթեցման հիմնական վայրը և ջոկատի ժամանակավոր սպասողական դիրքը: Ժամանակավոր սպասողական դիրքում կահավորվում են դիպուկահարների, գնդացրորդների և ականանետային հաշվարկների կրակային, ինչպես նաև մարտական (գրոհային) խմբի և տրանսպորտային ջոկի դիրքեր:

Պայթեցման պահեստային վայրը տեղակայվում է, որպես կանոն, հիմնականից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, այնտեղ կարող են ուղարկվել հինգից յոթ պայթեցնողներ:

Հանդիպման կետը տեղակայվում է հարձակման շրջանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, ինչի մասին հաղորդվում է անձնակազմին: Հանդիպման կետ

հասնելն իրականացվում է խմբերով կամ ինքնուրույն: Հանդիպման կետից ջոկատը ամբողջ կազմով վերադառնում է բազա:



Գծանկար 33. Գնացքակազմի հարձակման պլան


Կապի կետը տեղակայվում է հանդիպման կետից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, ինչի մասին հաղորդվում է անձնակազմին: Այս կետի նպատակն այն է, որ եթե, իրավիճակից դրդված խմբի կամ ջոկատի անդամները չեն կարողացել նշանակված ժամին ժամանել հանդիպման կետ, ապա հավաքվում են կապի կետում, որտեղ էլ հետագա գործողությունների կարգի վերաբերյալ անձնակազմը նոր հրահանգներ է ստանում:

Պահեստային շրջանը ընտրվում է հարձակման շրջանից 8-10 կմ հեռավորության վրա: Այն նախատեսված է հակառակորդի կողմից հետապնդվելու դեպքում խմբերը պատասպարելու համար: Տեղանքի ուժեղ կտրտվածության պայմաններում պահեստային շրջանը կարող է ընտրվել ավելի մոտ:

**Կամուրջների ոչնչացում**

Նահանջի ժամանակ կարևոր կամուրջները, որպես կանոն, ոչնչացվում են կանոնավոր գորքերի կողմից: Ջոկատները ոչնչացնում են հիմնականում հակառակորդի զավթած տարածքներում չպայթեցված կամ նոր կառուցված

կամուրջները: Մարտական գործողությունների ընթացքում հակառակորդը, ամենայն հավանականությամբ, կկառուցի փայտե կամ թեթև մետաղական կոնստրուկցիաներով կամուրջներ: Փայտե կամուրջները ոչնչացնելու համար կարող են օգտագործվել լիցքեր, որոնք տեղադրվում են տախտակամածի և կրող հենասյունների վրա կամ տակը: Մետաղական կոնստրուկցիաներից պատրաստված կամուրջները կարող են ոչնչացվել ցցերի և կրող հեծանների պայթեցմամբ (գծանկար 34):



Գծանկար 34. Մետաղական կոնստրուկցիաներից պատրաստված կամրջի ոչնչացումը

Կամուրջները ոչնչացնելիս կարևոր նշանակություն ունի ռազմաճակատում տիրող իրավիճակը: Անհրաժեշտ է դրանք շարքից հանել, այն ժամանակ, երբ հակառակորդը պետք է իրականացնի գործերի վերախմբավորում կամ պահեստուժի կենտրոնացում:

**Հարձակում օդանավակայանների վրա**

Ըստ իրենց նպատակների, օդանավակայանները բաժանվում են հիմնականի և պահեստայինի (դաշտայինի): Հիմնական օդանավակայանների թռիչքուղիները բետոնապատ են և օգտագործվում են ոմբակոծիչների, կործանիչների ու ծանր տրանսպորտային ինքնաթիռների թռիչքների և վայրէջքի համար: Հիմնական օդանավակայանի վրա հարձակումը նպատակահարմար է իրականացնել մինչև գումարտակ կազմով:

Պահեստային (դաշտային) օդանավակայանները տեղանքի հարթ հատվածներ են, որոնց վրա դարսում են հատուկ մետաղական վահաններ: Օդանավակայանները օգտագործվում են թեթև տրանսպորտային ինքնաթիռների, ուղղաթիռների կողմից: Պահեստային օդանավակայանները կարող են գրավվել և ոչնչացվել փոքր ստորաբաժանումների կողմից:

Օդանավակայաններում հարձակման հիմնական օբյեկտներն են շարժական ռադիոկայանները և ռադիոտեղորոշիչ կայանները, կայանատեղիներում գտնվող ինքնաթիռները (ուղղաթիռները), ՎՔՆ-ի և զինամթերքի պահեստները, թռիչքային և սպասարկող անձնակազմը:

Ջոկատը, երբ հարձակվում է օդանավակայանի վրա, որպես կանոն, ի վիճակի է ոչնչացնել երկու կամ երեք հիմնական օբյեկտ:


Օդանավակայանը կարող է շարքից հանվել կրակային կամ հանկարծակի հարձակման միջոցով:

Կրակային հարձակման դեպքում ականանետերից, առանց էտզլորք հրանոթներից, գնդացիներից, ՁՅՏԼ-երից և ինքնաձիգերից ոչնչացվում են կայանատեղիներում գտնվող ինքնաթիռները (ուղղաթիռները), ռադիո և ռադիոտեղորոշիչ կայանները:

Հանկարծակի հարձակման ընթացքում պաշտպանող խումբը արգելափակում է օդանավակայանը, իսկ մարտականը՝ ոչնչացնում է պահակախմբին, թռիչքային և սպասարկող անձնակազմին: Տեխնիկական խումբը շարքից հանում է ինքնաթիռները (ուղղաթիռները) և այլ օբյեկտներ: Տրանսպորտային խումբը բռնագրավում է ռազմավարը:


Ինքնաթիռները ոչնչացվում են նոնակներով և լիցքերի պայթեցմամբ: Ինքնաթիռի առավել խոցելի մասերն են օդառիչները, շասսին, վառելիքի բաքերը և սարքերը:

Ինքնաթիռների անձնակազմերը կարող են ոչնչացվել ինքնաձիգերի և դիպուկահար հրացանների կրակով (գծանկար 35):



Գծանկար 35. Օդանավակայանում թռիչքային անձնակազմի ոչնչացումը

Ուղղաթիռները ոչնչացվում են նոնակներով (լիցքերով) կամ մեխանիկական եղանակով: Ուղղաթիռների առավել խոցելի տեղերն են պտուտակի թիակների ամրացման հանգույցները, տարբեր սարքերը և վառելիքի բաքերը (գծանկար 36):



Գծանկար 36. Ուղղաթիռների խոցելի մասեր

1-պտուտակների թիակների ամրացման հանգույցներ, 2-կառավարման սարքեր:

Հարձակում շարժական հրթիռային կայանքների վրա


Հրթիռային կայանքների մեկնարկային դիրքերը կարևոր թիրախներ են ջոկատների համար:

Հրթիռային դիվիզիոնը (մարտկոցը) ներառում է մի քանի հրթիռային համակարգեր, կրակի կառավարման մեկ կամ երկու ՌՏԿ, հրթիռները վառե-

լիքով լիցքավորելու մեկ լցակայան, հեղուկ հրթիռային վառելիքով մի քանի ավտոմոբիլային ցիստեռն, պահպանության ստորաբաժանում:

Հրթիռային դիվիզիոնի հետախուզման նշաններն են մեծ թվով հատուկ սարքավորումներով շարասյան կազմումը, ծածկապատած հրթիռներով մեքենաների տեղափոխումը, ինչպես նաև տեսանելի գոլորշիները, որոնք առաջանում են հրթիռները վառելիքով լիցքավորելիս, կրակն ու ծուխը, որոնք յուրահատուկ են հրթիռների արձակման ժամանակ:

Հրթիռային դիվիզիոնի (մարտկոցի) կազմում առավել խոցելի են կառավարման ստորաբաժանումը, լիցքավորման կայանը և հրթիռային վառելիքով ցիստեռնը, շարժական ռադիոտեղորոշիչները, ինչպես նաև հենց հրթիռները: Այս բաղադրիչները կարող են ոչնչացվել կամ շարքից հանվել հրաձգային զենքերից, ՁՀՏՆ-երից կամ ձեռքի նռնակներով (գծանկար 37):




Գծանկար 37. Հարձակում հրթիռային մարտկոցի մեկնարկային դիրքի վրա

Հրթիռը շարքից դուրս հանելու ամենաշահավետ պահը՝ արձակման պահն է: Հրթիռի ռեակտիվ շարժիչը խլացնում է կրակոցների ձայնը, հաշվարկն ու պահպանությունը, որպես կանոն, գտնվում են թաքստոցում:


Հրթիռի արձակման պահը կարելի է ճշգրիտ որոշել նրանից 200 մ շառավղով անձնակազմի բացակայությամբ և հրթիռի պոչամասում ծխի առաջացմամբ:

Հրթիռի ամենախոցելի մասերն են մարտագլխիկը, կայունարարը, միջնամասը (որտեղ գտնվում է թռիչքի կառավարման ռադիոէլեկտրոնային բլոկն ու վառելիքի բաքը) և պոչամասը (որտեղ գտնվում է հրթիռի շարժիչն ու այրման խցիկը):

Հրթիռի մեկնարկային դիրքի վրա հարձակման կարևոր պայմանը ժամանակի ընտրությունն է: Հրթիռային կայանքի վրա կրակ բացելիս (գծանկար 38), որը ծավալված է մեկնարկային դիրքում, քիչ արդյունավետ է, քանզի հակառակորդը, լսելով կրակոցները և հայտնաբերելով ջոկատայիններին, կազմակերպելու է տեղանքի սանրում, ստուգելու է հրթիռների վիճակը և արագորեն վերացնելու է առաջացած անսարքությունները:



1



2

**Գծանկար 38. Հրթիռի նախապատրաստումը արձակման (1): Հրթիռի արձակումը (2)**

Պետք է հիշել, որ հրթիռի արձակման պահին շարժիչի ձայնը խլացնում է կրակոցները, իսկ արդեն խոցված հրթիռի արձակումը գրեթե անհնար է դադարեցնել:

### **Բնակավայրերի արագ գրավում**

Ռեզոնանսային պարտության կրելու դեպքում հակառակորդը ստիպված է լինելու լքել զավթված տարածքները:

Բնակավայրերի վրա հարձակվելիս ջոկատներն առաջին հերթին պետք է գրավեն կամուրջները, հեռուստա և ռադիոկայանները, վարչական և կառավարական շենքերը, արխիվներն ու քարտադարանները, հեռախոսային կայանները, բանտերը, երկաթուղային կայանները և այլ կարևոր օբյեկտներ:

Բնակավայրերի վրա հարձակմանը համատեղ պետք է մասնակցեն ջոկատներն ու դիմադրության շարժման անդամները<sup>1</sup>:

Հարձակման համար ջոկատներում ստեղծում են պահպանության ստորաբաժանումներ (որոնց խնդիրն է արգելափակել մուտքի ճանապարհները,

<sup>1</sup> Դիմադրության շարժմանը կանդրադառնանք առանձին հոդվածով:



կամուրջները, կիրճերը), գրոհային խմբեր (որոնց խնդիրն է գրավել տարբեր օբյեկտներ) և ռեզերվ:

Մարտիկներն իրականացնում են հակառակորդի հետախուզում, բացահայտում են նրանց տազնապով հավաքման կետերը, հենակետերը և կրակակետերը, անցկացնում են հարվածային խմբերի սպասողական շրջանների տեղազնություն, որոշում են դեպի բնակավայր գրոհային խմբերի թաքնված առաջարժման երթուղիները:

Հարձակումը կազմակերպելու համար կարող է սահմանվել հետևյալ կարգը.

- գրոհային խմբերի հրամանատարներն անձամբ են հետախուզում հարձակման ենթակա օբյեկտները,
- գրոհային խմբերը թափանցում են բնակավայր և զբաղեցնում նշված սպասողական շրջանները,
- պահպանության ստորաբաժանումներն արգելափակում են բնակավայրը կամ մարտական գործողությունների շրջանը,
- ազդանշանով հանկարծակի հարձակվում և գրավվում են նշված օբյեկտները:

Ռեզերվը ներգրավվում է հակառակորդի ջախջախումն ավարտելու կամ նրա մոտեցող պահեստուժի հարվածները հետ մղելու համար:

Մարտական գործողություններ վարելու համար գավթվում են հակառակորդի մեքենաները և ռազմական այլ տեխնիկա:

### **Եզրակացություն**

1. Տարածքը գավթելուց հետո հակառակորդը կձգտի հաստատել իր կարգը:
2. Պետք է հիշել, որ կանոնավոր բանակի նահանջով կամ պարտությամբ պատերազմը չի ավարտվում :
3. Զինված պայքարը պետք է շարունակվի մինչև լիակատար հաղթանակ: Դրան այլընտրանք չկա:
4. Պայքարը անխուսափելիորեն հանգեցնելու է դիմադրության շարժման և զինված ջոկատների առաջացմանը:
5. Եթե ռազմաքաղաքական դեկլարությունը թերագնահատում է զինված ջակատների դերը, առավել ևս անտեսում է այն, ապա մեծ սխալ է թույլ տալիս:
6. Պետք է մշտապես հաշվի առնել այն փաստը, որ ազգային առանձնահատկությունների որոշակի ինքնատիպության դեպքում բնակչության սովոր գանգվածը օկուպացիայի դեպքում խստորեն հավատարիմ կմնա «ավելի լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկած» սկզբունքին :